

այդ վանքն էր հայադրութեան տնկարանը։ Նոյն իսկ Նապօլեոնը, տեսնելով Մխիթարեաններին կատարեալ անհոգութիւնը այն բոլորի վերաբերմամբ, ինչ չէ վերաբերվում գրականութեան եւ գիտութեան, խնայեց նրանց ոչ յօրինակ ուրիշ վանական հիմնարկութիւններին։ Բայց օրը երկար ապրեց ւ. Ղազարի կողմէ, ուր ուսումնասիրում էր հայոց լեզուն եւ գրականութիւնը։ Այժմեան ժամանակ վենետիկի միաբանութիւնը՝ նըրանից 1811 թիւն (?) բաժանված վիեննական միաբանութեան հետ, հայադրութեան մի բարձրագոյն դպրոց է եւ դեռ երկար կը ծառայէ հայ ազգի անցեալին ու ներկան ուսումնասիրելու գործին։

Ունա լրագրի այդքան համակրական վերաբերմունքից յետոյ մարդ մի առանձին զգուշացում է յիշում այն դերը, որ բռնեց Մխիթարեաններին տօնի վերաբերմամբ հայոց մասնուի մի մասը։ Կ. Պօլսի մի քանի հայ լրագրողներ ամեն ջանք թափեցին նուազագոյն լուր Մխիթարեաններին մատուցած ծառայութիւնները։ Այդ բանի մէջ շատ քափ ու քրտինք թափեց մանաւանդ «Սուրբանդակ» լրագրողը։ Պատրաստել այն էր, որ Կ. Պօլսի հայոց պատրիարքարանը չը կամեցաւ մասնակցել Մխիթարեաններին յօրինակներին Սկզբում ասում էին՝ պատճառն այն է, որ հրաւիրաթուղթը Մխիթարեաններին արքան չէ ստորագրել, բայց այժմ ինքը, «Սուրբանդակ», խոստովանում է, որ պատրիարքարանի անուշազն անգղաքաշաւարի վարձուները բուն պատճառն այն է, որ այնտեղ գործող հոգեւորականներին դուր չէ եկել Մխիթարեաններին դրած հրաւիրաթուղթի լեզուն։ Այս ողորմելի բացատրութիւնները երբեք չեն կարող արդարացնել Կ. Պօլսի տառապանքներին, որոնք դեռ նորերումս ահագին վիճաբանութիւն էին սկսել յունաց պատրիարքի ձեռք մէջ եղած մի խօսքի առիթով։ Պօլսեցին պոսեցի է մնում. հօ չենք մոռացել, որ մի ժամանակ, երբ գոյութիւն ունէր ազգային ժողովը, երկար, անվերջ վիճաբանութիւնների առարկայ էր, թէ կարելի է կոչիկներով սեղան բարձրանալ թէ ոչ։ Ս. Ղազարի միաբանները ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցչին արած պատիւներով եւ սրտառանգ ընդունելութեամբ ցոյց տուին, որ դատարկ էին պոսեցիներին յետին մտքերը կամ, ինչպէս իրանք են ասում, «փափկանկատութիւնը»։ Դա մի փառաւոր ապագայ էր, որ Մխիթարեան վանքը տուեց պոսեցիներին անընդհատ հոսանքութեան։

Սակայն ինչո՞ւ զարմանանք Կ. Պօլսի հայուստեւորչական պատրիարքարանի վրա։ Անա նայն Մխիթարեաններին մի հատուածը, որ ապրում է վիեննայում. մինչեւ այժմ նա իր ամսագրում մի հատ բառ չստացել երկուհարկերամասերի առիթով, Նոր ստացանք «Հանդէս Ամսօրեայի» օգոստոսի համարը։ Բայց այդտեղ միայն հետեւեալ տողերը գտանք։

Մեր կրօնական եղբայր թիւթէն (յաւել. օգ. 1) կրիստոսեան թէ Իտալիոյ այրիացեալ մայր թաղուհին Մարգարիտա այցելել է վանքը, եւ Ուխտին Գեր. Աբրահամ պատրիարքն ունկնդրել է յետոյ, կէս ժամու չափ ամբողջ միաբանից ներկայութեան խօսքեր է իւր լուրջ ընտանութեամբը. եւ ի յիշատակ ուխտին երկհարկերամասայ յօրինակներն ներկրել է եկեղեցւոյ առաջ խորանին համար շքեղ մեծ վարագոյր մը։

Անա ինչպիսի համարաշխութիւն եւ եղբայրութիւն կայ երկու Մխիթարեան վանքերի մէջ։ Բացատրութիւնները աւելորդ են։

Ներքին, հարցրեց նա ուսուցիչն, Ժպտալով։

—Այո, կուզէի իմանալ այստեղ են թէ թիւթէն լիութեւ։

—Իսկպէս ո՞վ է ձեզ հարկաւոր, նրանք շատ են։

—Այդ մի եւ նոյն է... բայց կը ցանկայի օրիորդ Նինային հանդիպել, — յուզված, բայց վճռողաբար արտասանեց Արսէնը։

—Այդ դժուար չէ, բայց նախ եւ առաջ պատեւ ունեն մերկայանալու, իշխան Նազարիձէ։

Արսէնի համար անպատեղի էր այդ Նա եկել էր Գորի ծածուկ եւ հիմա ստիպված էր իր անունը տանել Դիմեց խորամանկութեան, անուանելով իրան Մոնթեան։

—Կամ եմ։ Ասացէ՛ք խնդրեմ որտեղից էք ճանաչում օրիորդ Նինայիկային։

—Թիֆլիսից... հինգ տարի առաջ ես նրա ուսուցիչն եմ եղել։ Կարծեմ լուրսից կեղծեց նա։

—Այո, այո, հասկանում եմ։ Դո՛ք այսօր իմ հիւրն էք, այս րօպէիս կերթանք տուն եւ օրիորդ Նինայիկային էլ կը հրաւիրենք, նա կնոջս ընկերուհին է։

Այս բոլորը իշխանը ասում էր բարձրաձայն ծիծաղելով։

—Ամենայն օրով, պատասխանեց երիտասարդը եւ ուրախութիւնից ափերը շինեց, չը

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

— Սեպտեմբերի 10-ին

Թեմական դպրոցից արձակված ուսուցիչները այսօր խորհադարան վիտում են դպրոցի եւ առաջնորդարանի չէմբուս, ինչպէս վայել է յաղթանակը՝ սուրբ եւ անսուրբ միջոցներով տարած անկախութեան։

Ամբողջ երեք ամիս մեր դժբաղդ դպրոցի շուրջը կատարվող տխուր արագիւտ-կոմիդիան այսօր վերջացաւ զանազան Սմառտեանների եւ նրանց պատրոն Սուքիաս եպիսկոպոսի կատարեալ յաղթանակով։ Արհամարհված է հոգաբարձութիւնը, իբրեւ դպրոցի ղեկավարութիւն մասնակից մի մարմին, արհամարհված են ամբողջ հասարակութեան նոյն իսկ բարձրաձայն յայտնված տրտուշները։ Սուքիաս եպիսկոպոսը, հակառակ հրապարակով տուած իր երդումներին, հակառակ նոյն իսկ իր ստորագրութեան, այսօր բացում է դպրոցի դռները իր մարդկանց առաջ։

Մի կողմից դեռ յունիսին էր, երբ նա, լսելով հասարակութեան արդար զայրոյթը, որ մեղադրում էր նրան իր եղբորորդի Մակար Տէր-Սարգսեանի պատճառով ամբողջ դպրոցի խաղաղութեան գործը ռոմակոսի անելու համար, հրաւիրում է հոգաբարձութիւնը եւ երդվում, որ նա մնալու է հաւատարիմ իր խոստման, այն է՝ անփոփոխ պահել ուսուցչական կազմի վերաբերմամբ հոգաբարձութեան եւ իր կայացրած վիճուք. բայց չէ անցնում եւ մի քանի օր, երբ նա մեղ, հասարակ մեղակայութեան անհասկանալի սառնասրտութեամբ, ուղղում է մի գրութիւն նոյն հոգաբարձութեան, որով հրաժարվում է իր ըստորագրութիւնից, պատճառաբանելով, թէ սխալվել է, տալով իր համաձայնութիւնը մայիսի 31-ին ուսուցիչների արձակման խնդրի ընդնկիւր։ Պէտք է ենթադրել, որ շատ հիմնաւոր պատճառներ ունէր Սուքիաս եպիսկոպոսը, որ հնարաւոր է համարում 20 օր անցնելուց յետոյ, երբ արդէն ուղարկված են հրաւիրաթուղթ արձակվածներին փոխարինող ուսուցիչներին, իր ստորագրութիւնը յետ վերցնելու. բայց եւ այնպէս տարրական օրինակաւորութեան տեսանկյանց միջոց անբացատրելի կը մնայ այն երեւոյթը, որ ամբողջ հիմնարկութեան ղեկավարող մարմին նախագահը հնարաւոր համարէ յետ վերցնել իր ստորագրութիւնը՝ «սխալվել եմ» փաստաբանութեամբ։

Մնումնեմ, ինչպէս յայտնի է ձեզ, երկու կողմերից էլ բողոքներ են գնում Էջմիածին, որտեղից գալիս է Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեան՝ համաձայնութեան բերելու հոգաբարձութիւնը նախագահի հետ. օրա հետեւանքն այն է լինում, որ Էջմիածնից խոստանում են բաւականաչափ հոգաբարձութեան մինչեւ այդ արած գիշումներով իբրեւ անհրաժեշտ մի տուրք Սուքիաս եպիսկոպոսի «խաթիր» եւ գոնէ արձակված ուսուցիչների վերաբերմամբ հաստատել հոգաբարձութեան օրոշումը։ Բայց այս բոլոր խոստումներին հետեւանքն այն եղաւ, որ Սուքիաս եպիսկոպոսը Էջմիածին ուղարկեց իր մի այլ արքանական, «չափազանց յայտնի» Սարգիս վարժապետին, որ իսկութեամբ կատարելով իր մեծաւորի խրատները, հէնց երկրորդ օրը բերել տուեց կաթողիկոսական մի կոնդակ, որով տեսչի պաշտօնակատար

նայած որ պաշտօնային վարձուքը Նինայի անունան նկատմամբ նախանձ եւ տարօրինակ կապակց էր յարուցանում նրա մէջ։

Պօսելով դուրս եկան հիւրանոցից եւ դիմեցին քաղաքի կենտրոնի կողմը։

—Ասացէ՛ք խնդրեմ, որտեղից էք գալիս, ի միջի այլոց հարցրեց Նազարիձէն։

Արսէնը սպասում էր այս հարցին եւ պատասխան էլ պատրաստել էր։

—Օղեսայից։

—Ինքս պէտք է ասէի, որ երեւի Օղեսայի ուսանող էք։ Իսկ եւ իսկ այնտեղի լեզուով էք խօսում։ Ես էլ մտադիր էի ձեր համալսարանի իրաւաբանական ֆակուլտետը մտնել, բայց...

—Ինչո՞ւ միտքներդ փոխեցիք։

—Գիւմրից վեցերորդ դասարանից դուրս եկայ, այսինքն դուրս արեցին, ծիծաղելով աւելացրեց իշխանը։

—Երեւի մի եւ նոյն դասարանում երկու տարի մնացիք։

—Ոչ, ատ օր օ ծիծեմեցի։ Ընդհակառակն, ամեն տարի պարգեւով էի փոխվում։

Հասան տունը։ Իշխանը իր հիւրին ներս հրաւիրեց դահլիճը, որ բաւական մաքուր եւ շնորհքով կահաւորած էր, նստեցրեց բազկա-

է նշանակվում ինքը, Սարգիս դպրոցը, նորից ընդունվում են արձակվածները եւ միանգամայն անտրոշ վիճակի մատնվում նոր հրաւիրվածները։

Մինչեւ այդ կոնդակի ստացվելը հոգաբարձութիւնը մի պատճառաբանած բացատրութիւն ուղարկելով վեհափառ Կաթողիկոսին եւ պարզելով այս բոլոր խոստումներին իսկական պատճառը, ցոյց տալով, թէ որպիսի խնամակարան կապեր ստիպում են Սուքիաս եպիսկոպոսին այդպէս անխիղճ կերպով օտնաւորելով դպրոցի շահերը եւ հոգաբարձութեան պատիւը, խնդրում է ազատ համարել իրան հոգաբարձական պարտականութիւններին։ Կաթողիկոսը կարգաւորվ այն բացատրութիւնը, ինչպէս ասում են, սաստիկ զայրաւորւմ է Սուքիաս եպիսկոպոսի վրա, որ իրան մոլորեցրել է, եւ շտապում է այս անգամ ուղարկել կարագետ վարդապետին, որին յանձնարարված է առաջարկել հոգաբարձութեան միայն լսել արդէն գրած կոնդակը եւ մնալ իր պաշտօնում, արձակվածներին միայն մի թշուառական ընդունելու եւ Սարգիս վարժապետին տեսչի պաշտօնակատար նշանակելու պալմանով։ Որքան եւ դժուար լինէր հոգաբարձութեան համար այս դէպքերից յետոյ էլ ի մնալ դպրոցում եւ այն էլ նոր գիշումներին գնով, բայց եւ այնպէս դպրոցի շահերի գիտակցութիւնը ստիպեց համաձայնվել եւ այդ պայմաններին. բայց այս անգամ էլ վիճակված էր նոր հիասթափութիւն։ Կարագետ վարդապետը ներկայութեամբ համաձայնութեան գաւառ հէնց երկրորդ օրը, դեռ Էջմիածնից ոչ մի լուր չը ստացած, Սուքիաս եպիսկոպոսը մի պաշտօնական գրութեամբ, Սարգիս դպրոցի անունով հրաւիրում է վերջինիս իբրեւ տեսչի պաշտօնակատար, իսկ արձակվածներին իրանց նախկին պաշտօնի, որոնք եւ այսօր սկսեցին վերադառնալ իրենցինքն. հոգաբարձութիւնը, յոգնած այս բոլոր խաղերից, երեկվանից դադարեց յաճախել դպրոց, թողնելով իրերի վիճակը իրանց ընթացքին եւ Սուքիասի անհրաժեշտութիւններին մինչեւ Կաթողիկոսին (որ բացակայ է Էջմիածնից) իրանց խնդրի վերջնական պատասխան ստանալը, որից յետոյ հասնական է կը տայ իր հրաժարականը։

Ան այժմ ահա աս է մեր Թեմական դպրոցի վիճակը։ Եկել են երեւան նոր հրաւիրված ուսուցիչները, որոնք ամբողջ շաբաթ է, ինչ սպասում են իրանց անորոշ վիճակի պարզվելուն, բայց իզուր Էջմիածնից չէ համարձակվում դէմ գնալ «զօրեղ» արքանական պաշտօնին։

Յաւաքի, անմխիթար վիճակ։

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՍՈՒԻԲԱԶԱՐԻՑ

— Օգոստոսի 30-ին

Դարասուբազարից 12 վերստ դէպի հարաւարեւելք, Թաթարական Բաղնիկի գիւղի ծայրին, մի լեռան ստորոտում, չինված է հայոց ս. Փրկչի վանքը, երկրորդը ամբողջ Ղրիմում, ս. Պաշի վանքից յետոյ։

Ինչպէս առաստաղակ Ղրիմի շատ գիւղեր իշխալ գիւղն էլ ու մանաւանդ ս. Փրկչի վանքը կարող են շատ քանակի ամառանոց համարվել իրանց հրաշալի օդով, ձոր բուսականութեամբ, սառն աղբիւրներով։ Այդ է պատճառը, որ ինչ-

թողի վրա ու ինքը մտաւ հարեւան սենեակը, որտեղից երեխայի լայն ձայն էր լսվում։ Շուտով վերադարձաւ, ամառով քաղցրաւենիք ձեռքին ու առաջարկեց ուսելու, ասելով որ այդ ստորին մուրաբա են եփել։ Յետոյ լուրջ կերպով պատմեց, որ երեխային նոր են ծծից կտրել եւ այդ պատճառով գիշեր-ցերեկ ճշում է։ Վերջը ձայնը ցածրացնելով, աւելացրեց, որ կինը չիմանալով, որ կրկին յղի է, շարունակում էր փոքրիկին կերակրել եւ այդ բանից հիւսնդացաւ, բայց, փառք Աստուծոյ, հիմա լաւ է։

Նազարիձէն յանկարծ փոխեց տխուր խօսակցութիւնը, սկսեց կատակներ անել ու հըրհոյալ, գուշակելով Արսէնին, որ նա էլ չուտով շատ պէտք է ծծիաղի։

—Կինն չուտով դուրս կը գայ, կը ծանօթանա՞ր ու կը խնդրէ, որ օրիորդ Նինային հրաւիրէ։

—Ի՞նչ էք ասում, ես երբեք չեմ լսնդգնի իշխանուհուն նեղութիւն պատճառելու, եթէ բարի կը գտնվէ ու դուք կը խնդրէք...

—Շատ ճշմարիտ էք ասում, ծծիաղելով պատասխանեց Նազարիձէն եւ իսկոյն կանչեց. —Երեւանում, սպասում ենք ձեզ, մի բան ենք ձեզանից խնդրելու, բարեհաճեցէ՛ք դուրս գալ։

պէս բժշկներն էլ վկայում են, ս. Փրկչի իր հարուստ բնութեամբ ազատ կարող է մրցել Ղրիմի հարաւային ծովեզերքում գտնվող կուրորտներին հետ։ Քաղաքից դէպի վանք տանող ճանապարհը թէեւ մինչեւ այժմ շատ անյարմար, նոյն իսկ վտանգաւոր էր, բայց այժմ, չնորհիւ նոր չինվող խճուղու, երթուկութեւնը հեշտանալու է։

Վանքը մանկիւս այցելուի ուղարկութիւնը ամենից առաջ գրաւում է ճանապարհին, մի բարձրութեան ծայրին, մատուռի ձեւով չինված մի աղբիւր, որին տեղացիները «Տոյա-աղբիւր» են կոչում եւ որտեղ ամենից հետաքրքրականը հայերէն արձանագրութիւններով ծածկված մի գեղեցիկ խաչքար է, որ դրված է ջրի առաջին վերելում, պատի մէջ եւ որ, ինչպէս երեւում է, տեղական գործ չէ, այլ հին է, երեւի Հայաստանի մի վանքից բերված խաչքար է։

Վանքի եկեղեցին, թէեւ փոքրիկ, բայց կոկիկ ու գեղեցիկ է եւ շատ հիմնալի տպաւորութիւն է թողնում իր ձեւով ու դիրքով, մանաւանդ հետոյից, գիւղը մանկիւս։ Մի բան միայն մեզ զարմացնում է, այդ այն է, որ եկեղեցու համարեա բոլոր հին պատկերները, որոնցից մանաւանդ մի քանիսը շատ գեղեցիկ գործ էին, 1897 թիւն նորոգված են ունի Պետրոսեանի ձեռքով, որ բոլոր պատկերների տակը դրել է իր ազգանունը, այսինքն ներկայացրել է իբրեւ սեփական գործ, մինչդեռ նրանցից միայն մի քանիսը (այն էլ անաղագսներ) պատկանում են պ. Պետրոսեանի վերածինին։

Վանքը աղքատ է, ունի միայն մի փոքրիկ պարտեզ, որից տարեկան միայն մի քանի հարիւր բուրբեկ եկամուտ է ստանում։ Այդ է պատճառը որ վանքը վանահայր էլ չունի եւ կառավարվում է տեղիս հայոց եկեղեցու երէց-փոխի ձեռքով, իսկ վանքի մօտ հսկողութիւնը յանձնված է մի պահապանի, որը իր ընտանիքով մշտապէս ապրում է այնտեղ։ Ուխտաւորների համար վանքի գաւթում չինված են 20-ի չափ մաքուր, լուսաւոր եւ լաւ կահաւորված սենեակներ։

Վերջին տարիներում Ղրիմի հայերի, մանաւանդ հարուստ դասակարգի մէջ մտել է մի շատ տեղի սովորութիւն, այն է՝ ձրի գործ տանել վանքի, առանց այն էլ չնչին սեփականութիւնը։ Ամեն տարի Ղրիմի զանազան քաղաքներից մանաւանդ հարուստ հայեր իրանց ընտանիքներով գնում են վանքը իբրեւ ամառանոց եւ, ամիսներով ապրելով այնտեղ, ձրի գործ են անում վանքի վառելիքը եւ ծառայեցնում են վանքի պահապանին իր ընտանիքով եւ այնուհետեւ հեռանում են այնտեղից, առանց մի կօպէկ տալու վանքի կամ պահապանի օգտին, որի տպուկատի միջոցը գլխաւորապէս ուխտաւորներից ստացած եկամուտն է կազմում։

Հրաւիրում ենք հոգեւոր իշխանութեան ուղարկութիւնը այս տեղի սովորութեան վրա։

Թ. Աբրահամեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

— Թիֆլիս, սեպտեմբերի 18-ին

Յայտնելով իմ խորին շնորհակալութիւնը մինչեւ այժմ ի նպատակ իմ «Բժշկի գործեր»

Ամբիջապէս դուռը բացվեց ու երեւաց մի շատ ջանիկ կին, գունատ դէմքով ու խիտ մազերով։ Աչքերը կարճատեսների նման կիսով չափ ծածկելով մի վարկեան դիտեց հիւրը դէմքը ու յանկարծ ձեռքը գարկելով իր ճաւաղիկն յետ գցեց գլուխը, կարծես գնդակ դիպաւ այնտեղին։ Մի անորոշ, խուլ ձայն լսվեց նրա բերանից ու նա մնաց դռանը յենված անշարժ։

Արսէնը զգաց ինչպէս թէ իր գլխին տաք ջուր անծեցին, որ արագութեամբ անցաւ ամբողջ մարմնի վրայով։ Նա բարձրացել էր իշխանութեան բարեւելու համար, բայց այնպէս վայր ընկաւ բազկաթոռի վրա, որ կարծես կրծքին ուժգին հրեցին։ Բերանում ունեցած քաղցրաւենին զարմանալու չափ դառնացաւ։ Լեզուն վարկեանաբար ցամաքեց եւ դէմքին իջաւ մեռելային գոյն...

Դժուար է նկարագրել մարդու հոգեկան դրութիւնը այսպիսի վայրկեանին։ Իշխանը գլուխը կորցրած ու աչքերը լայն բացարած, —մեքենաբար արտասանեց.

—Вотъ те и на!

Գ. Բալինջապէս

Պարիզ.

բնակիչները հրատարակութեան օժանդակութեամբ տեղեկանքներն են յայտարարում եւ, որ ասիական տարածքները չեն ընդունում որոշեալ տեսակի անասնաբուծութիւններ եւ տեսնում զայն մէջ չարատարութիւններն օգնել ցանկացողները կարող են գնել գործընկերս մի որոշ քանակութիւն եւ տարածել ժողովրդի մէջ։ Օրինակ, եթէ մէկը ցանկանաւ 50 ռուբլի նուիրել այս գործին, նա լաւ կանէ, որ այդ դուրսի գործընկեր վերջնէն ծանկացողները կարող են ի հարկէ փողն ուղարկել վաղորօք, մինչեւ քրոշիւրի լոյս տեսնելը, որով ինձ շատ նպաստած կը լինեն։

Բժշկ. Վ. Արծրունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեւոյթի, սեպտեմբերի 18-ին, երեկոյան ժամի 6-ին, Թիֆլիսի հանգուցեալ քաղաքացի Պէթրէ Եւանգուլեանի ընտանեացիները տեղի ունեցաւ հոգեհանգիստ, որին ներկայ էին կողմասեան կառավարչապետ ի. խան Գոլիցին, քաղաքային վարչութեան բոլոր անդամները, քաղաքային խորհրդի ձայնավորները, ներկայացուցիչներ զանազան ընկերութիւններէ եւ հաստատութիւններէ կողմից, քաղաքային ուսումնարաններէ ուսուցիչները եւ ուսուցչուհիները, բժիշկներ եւ ժողովրդի խումբ բազմութիւն։

Ցուցահանդէսի վարչութիւնը վերջին օրերը ստացաւ մի քանի նոր իրեր, օրինակ վեպեր, կար միջատների ժողովածու հիւսիսային կողմից, բազմաթիւ թարմ մրգեր եւ մի քանի նոր գործիքներ։

Կողմասեան Գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը որոշեց նշանակել ընդհանուր ժողովի հանդիսաւոր նիստ վրաստանի եւ Ռուսաստանի միացման հարիւրամեայ տարեդարձի եւ ընկերութեան գոյութեան յիսնամյայ յօբելեանի առթիւ։ Իսկ հոկտեմբեր ամսի սկզբից ընկերութիւնը մտադրութիւն ունի բանալ գիւղատնտեսների համաժողով։

Երէկ, սեպտեմբերի 19-ին, հաղորդակցութեան ծանապարհների միմիկտր իշխան Սիւրիով աւտոմոբիլով վաղորդակալուից ծանապարհ ընկաւ զէպի Թիֆլիս։

Սեւ եւ Բալտիկ ծովերը միմեանց հետ ջրբանջեղով միացնելու նախագիծը նորից հերթական հարցերի կարգն է անցել։ Բէլգիական խոշոր գրամատներէ մի ընկերութիւն յանձն է առնում կատարածել այդ հսկայական նախագիծը, որ կը նստի, համաձայն արդէն կազմած նախահաշուի, 140 միլիոն ռուբլի Ընկերութիւնը պահանջում է երկար տարիների կոնցէսսա Պետերբուրգի լրագրների ասեկով, բէլգիական գրամատներին յայտ առաջարկութիւնը կառավարութեան կողմից գտնված է անձեռնուռ։ Հաւանական է, որ կառավարութիւնը ինքն յանձն առնի Սեւ եւ Բալտիկ ծովերի միացման նախագիծը իրադրութեամբ։

Մեզ հաղորդում են, որ այգեգործական ժողովի այն բաժինը, որ զբաղված էր այգիներին վնասող հանգամանքների ջննդութեամբ, արդէն վերջացրեց իր պարապմունքները։ Այդ բաժնի նախագահ Ա. Յաչիվալիյ, փակելով նիստը, յայտնեց, որ նա իր կողմից խնդրում է ուղարկել իրան զանազան բույսերի վնասված նմուշներ, որպէս զի իր հետազոտութիւնների միջոցն ունենայ իրականորէ նմուշներ։ Յաչիվալիյ ուղեւորվեց Պետերբուրգ։

«Торж.-Пром. Газета» լրագրը հաղորդում է, թէ արդէն հրատարակված է տարիք Ալեքսանդրօպօլ-Երեւան երկաթուղային գծով ծանապարհորդներ, ծանրացը եւ մասնաւոր անձանց ապրանքներ տեղափոխելու վերաբերմամբ Տարիքի կը մտնի այն օրից, երբ ժամանակաւոր երթեւեկութիւն կը բացվի այդ գծի վրա։ Գլխաւոր գները հետեւեալներն են։ II կարգի վազօնով ծանապարհորդները—3 կօպէկ մի վերատի համար, III կարգի վազօնով ծանապարհորդները—2 կ. մի վերատի համար եւ IV կարգի վազօնով ծանապարհորդները—1,25 կօպէկ մի վերատի համար։ Մասնաւոր անձանց բեռների տեղափոխութեան վարձ նշանակված է,—մի վազօնի եւ վերատի համար 37 1/2 կօպէկ։ Ապրանքներ պուրի հաշով տեղափոխելու դէպքերում ամեն անգամ պէտք է անհանձն թողալութիւն խնդրել երկաթուղու ժամանակաւոր երթեւեկութեան կառավարչից։

Քաղաքային վարչութեան շինարարական բաժնի

Ժամանակը մշակված է արդէն նախագիծ մի նոր կամուրջ շինելու Կուր գետի վրա Մուխրանսկի փողոցից դէպի Կուրի հանգիստակաց ափը։ Այս նախագիծով մտադրութիւն կայ շինել կամուրջի երկու կողմերում քաղաքային շուկայ եւ քաղաքային խանութներ։

Սեպտեմբերի 25-ից բացվում է կողմասեան ցուցահանդէսի կաթնատնտեսական բաժինը, որի կառավարիչ Ա. Քալանթար մտադրութիւն ունի կազմակերպել մի շարք դասախօսութիւններ կաթնատնտեսութեան մասին։ Դասախօսութիւնները ժամանակ տեղի կունենան եւ գործնական զբաղմունքներ։

«Новое Обозрение» լրագրին հաղորդում են Անդրկովկասեան երկաթուղու Աղ-Թեալեա կայարանից, թէ սեպտեմբերի 17-ին, երեկոյան 8 ժամին եւ 40 րօպէին, այդ կայարանի եւ Նաթիւլի մէջտեղում անյայտ աւազակներ յարձակվեցին ապրանքատար գնացքի վրա։ Մեքենավոր կանգնեցրեց գնացքը։ Հարեւան կայարանից յարձակման տեղը հասած կոնզուկատորներին եւ պահապաններին աջողվեց բռնել աւազակներից մէկին, իսկ միւսները կարողացան փախչել, տանելով մի ծանապարհորդից մի քանի կտոր շորեղէն եւ 17 ռուբլի փող։

Ներկայ տարվայ աշանը կատարովի այն երկաթուղու կառուցումը, որ Բուխարայի էմիրը իր ծախսով շինել է տալիս խանութեան մայրաքաղաքը—Հին-Բուխարայի եւ Միջին-ասիական երկաթուղու կայարանի՝ Նոր-Բուխարայի միջեւ։

Մայրաքաղաքի լրագրների խօսքով, Մուկվայի հասարակական առողջութեան յանձնաժողովը ջննում էր ներքին գործերի միմիկտրութեան առաջարկութիւնը՝ անասնաբուծական վրա հակելու եւ դրա դէմ կռուելու հարցը։ Յանձնաժողովը այն եզրակացութեան եկաւ, թէ ցանկալի կը լինէր փակել անասնաբուծիչները Մուկվայում։

Երկաթուղիների գլխաւոր տեսուչ Ա. Ն. Գորչակով ծանապարհ է ընկել Պետերբուրգից երկաթուղիները ջննելու համար։

«Рыб. Ц.» լրագրի ասելով, ինժեներ-տեխնիկ Կ. Բիբոգինսկիի գլուխ է Թերեքի ջրէլեակում, իրաւաւ-Իւրաի մօտ, արծաթի հարուստ հանքեր։

Ֆինանսների միմիկտրութիւնը ձեռնամուխ է լինում կազմելու մի մեծ աշխատութիւն՝ «Պարսկաստանի նկարագրութիւն» վերնագրով։

ՍԻՄՖԵՐՊՈԼԻՑ մեզ գրում են. «Սեպտեմբերի 14-ին, այստեղ, քաղաքային պարտէզում, կը բացվի առաջնայնգործութեան ընկերութեան Սիմֆերոպոլի բաժանմունքի կազմած ցուցահանդէսը, որ կը տեւէ երեք օր։ Ցուցահանդէսի համար յարմարեցրած է ամառային թատրոնի շինութիւնը, որի աջ կողմից կցված է մի նոր շինութիւն, իսկ շուրջը՝ մի քանի պաւլիոններ։ Ցուցահանդէսը կը լինեն պարտիզպանութեան, զինեցորդութեան, ծաղկաբուծութեան, մեղրապահութեան, չրաւապահութեան արտադրութիւններ։ Ամենալաւ է կապօնատների համար նշանակված են պրէ-միաներ՝ ոսկի, արծաթի, պղնձի մեդալներ եւ արցանակներ։ Ցուցահանդէսում կը բացատրվեն եւ ցոյց կը տրվեն, թէ ինչպէս պէտք է չորացնել մրգերը, ինչպիսի միջոցներ պէտք է գործադրել վնասակար միջատների դէմ եւ այդ նպատակի համար ցուցահանված գործիքների հետ ինչպէս վարվել։ Բացի այս բոլորից յաճախորդները կը ծանօթանան նաեւ կարկառեւ ամպերը ցրվող գործիքների հետ։

ՂՈՒՐԱՅԻՑ մեզ գրում են. «Անասունների մէջ ժանտախտ տարածվելու պատճառով թանգութիւն է տրուում մեզանում, քանի որ արգելված է գիւղերից քաղաք բերել միջերան։ Միայն պտղեղէնն է էփած ծախվում։

ԱՐՄՈՒՆԻԿ գիւղից (Չանգեզուրի գաւառ) մեզ գրում են. «Մայիսի 20-ից սկսած մինչեւ օգոստոսի 30 անձրեւ չենք տեսել. ամառը շատ չոք էր. գիւղացիները չորային հաւաքեցին խոտը, հոնձն արին, կալ կալեցին։ Հիմա հերկանելու ժամանակն է մօտենում, բայց հողը այնքան ամուր է, որ հերկը անհնարին կը լինի. եթէ առաջվայ պէս շարունակվեն չոքերը՝ վերջին օրերը քիչ-քիչ անձրեւներ են գալիս եւ

յոյս են տալիս, որ հեշտանայ հերկ անելու Գիւղացիները բաւական են ներկայ տարուց։ Անցեալ տարի այս ժամանակ ցորենի պուրը 1 ր. 50—1 ր. 60 կօպէկ էր, իսկ այս տարի 80—90 կօպէկ։ Ուղարկը այս տարի շատ քիչ էր, թուրք բերքը միջակ։ Արծառնիկի մօտ Ձէյվա գիւղում, որտեղ անցեալ տարի կարկուտը երեք անգամ բոլորովին ոչնչացրեց ցանած արտերը, այս տարի ցորենը շատ առատ է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍԱՆԻՑ

Թաւրիզ, օգոստոսի 31-ին

Մի քանի օր առաջ, ամսիս 22-ին, Թաւրիզի նորակազմ «Երաժշտասիրաց ընկերութիւնը» նշանակել էր գեղարուեստական ու երաժշտական մի երկույթ։ Որքան դիտեմ, 5—6 ամսի է, որ այդ ընկերութիւնը կազմակերպվել է, բայց եւ այնպէս կարողացել էր պատրաստվել հասարակութեան առաջ դուրս գալու։

Բացվում է վարագոյրը, երաժշտական խումբը նուագում է «պարսից հինը»—Վուրթաների, ֆլէյտների եւ թափի վրա. նուագումը անցնում է շատ աջով. ապա պ. Գ. Չիլիկեան, մի քանի ամիսի խօսքերով, բացատրում է երաժշտութեան նշանակութիւնը եւ նրա ազդեցութիւնը մարդկանց բարքերի վրա. երգում են սօլօ երգեր, խումբը նուագում է մի քանի եւրօպական եղանակներ, որոնց մէջ առանձին ուղարկութեան են արժանանում բոլորարական եւ հուրայի մարչերը. լաւ էր նուագումը պարականակա «Թաւրիզ» եղանակի եւ հայկական ժողովրդական «Շողեր-ջան» եւ «Հան-գիւրում» երգերի։

Նոյն խումբը ներկայացրեց եւ Փառնակէսի «Բանաստեղծ» պիէսը։ Ուղղում էր նորակազմ երաժշտական ընկերութիւնը, ջերմ կերպով ջանաւորում ենք նրան աջողութիւն եւ յուսով ենք, որ նա կը շարունակէ տալ այսպիսի երաժշտական երեկոյթներ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հօլլանդական լրագրների ասելով, բօքսական գնեւալ Գրօլէր դիմեց Կապի օրէնսդրական ժողովի Կոլոնիացի անդամներից մէկին մի նամակով, որի մէջ խօսում է բօքսական գործի շարժումների եւ մտադրութիւնների մասին Կապի գաղթականութեան մէջ։ Մենք այժմ մեծ արագութեամբ առաջ ենք գնում զէպի հարաւ,—գրում է Գրօլէր,—մեր մտադրութիւնն է գրաւել Աստուծոյ օգնութեամբ այն բոլոր շրջանները, որոնք պատկանում են անգլիացիներին։ Որովհետեւ Կապի գաղթականութեան բոլոր ճշմարիտ հայրենասէր—աֆրիկանդները կամենում են ազատվել բրիտանական լուծից, ուստի, մենք կարծում ենք, որ սա ամենայնաւոր րօպէն է բարձրացնելու բօքսական դրօշակը Կապիադառուում։ Դուք կարող էք յոյս դնել մեզ վրա. մենք անչեղ առաջ ենք գնում։ Մի ծովից մենք մօտենում ենք միւսին եւ յոյս ունենք պարզել մեր գրօշակը մարող հարաւային Աֆրիկայում, որ ապա կը կառավարվի աֆրիկանդներին կառավարութեամբ, եթէ օգնութիւն գտնենք մեր եղբայրակից աֆրիկանդներին։ Կարգացէ՛ք այս նամակը ձեր իսկական աֆրիկանդէր բարեկամների մօտ։ Որքան էլ նշանաւոր են բօքսների աջողութիւնները Կապի գաղթականութեան մէջ—նկատում է այս նամակի աւերթով «НОВОСТИ» լրագրը,—այսուամենայնիւ չէ կարելի չը զարմանալ բօքսական գնեւալի չափազանց լաւատես հայեացքների վրա։

—«Memorial Diplomatique», ճիշդ տեղեկութիւնների հիման վրա, հաղորդում է, թէ չը նայելով բոլոր գոտարութիւններին, կարճ ժամանակից յետոյ Բերնում կը գումարովի միջազգային կոնֆէրէնցիա անիւսականների վրա։

—«Evening Standard» հաղորդում է, թէ անգլիական թագաւոր Էդուարդ VII 1902 թ. ականին Դէլի քաղաքում կը թագադրվի որպէս Հնդկաստանի կայսր։

—Թէհրանից հաղորդում են «Սուրհանդակ» լրագրին, թէ Շահի հրամանով 150 երիտասարդներ, բոլորն էլ բարձրաստիճան անձանց, զաւակներ, կուղարկվեն շուտով Գ. Պոլս, Պարիզ, Պետերբուրգ, Մոսկվա, Լոնդոն, Բերլին եւ Վիէննա զանազան ուսումնարաններ մտնելու համար, որտեղ նրանք կը սովորեն պարսկական կառավարութեան հայելով։

—Ինչպէս յայտնի է, հոկտեմբերի 1-ին (ն. ժ.) վերջանում է այն ժամանակամիջոցը, որի ընթացքում Ֆրանսիական կրօնական միաբանութիւնները պէտք է դիմեն կառավարութեան եւ թոյլտուութիւն խնդրեն միաբանութեան Կապի միջոցով անցնելու Այն ինչ անցնելու այժմ նրանց շատ քիչ ժաման է դիմել կառավարութեան այս տեսակ խնդրեցով։ Ինչպէս հաղորդում են այժմ լրագրները, կրօնական միաբանութիւնների

մեծամասնութիւնը վճռել է բոլորովին անտես անել միաբանութիւններին վերաբերեալ նոր օրէնքը եւ ոչ մի ջանք չանել այդ ուղղութեամբ, այսինքն չը դիմել կառավարութեան թոյլտուութիւն խնդրելու եւ անելի տալ միայն ոյժի առաջ։ Միաբանութիւնները այն կարծիքին են, թէ ազատ կամքով հեռանալ Ֆրանսիայից նշանակում է գործել համաձայն հանրապետական կառավարութեան դիտումների։

—Ամաթի-Չաման» լրագրը իր ընթերցողներին ուղարկութիւնն է դարձնում վայրերին ներքին գործերի միմիկտր ուղարկած հետեւեալ շրջաբերականի վրա, որ սպված է Կ. Պոլսի լրագրներից։ «Յայտնի է բոլորին, որ նորին մեծութիւն փաղիշաւը միշտ առանձին (!) հոգատարութիւն է ցոյց տուել կայսրութեան մէջ խաղաղութիւն, հանգստութիւն եւ եղբայրական բարեկամութիւն պահպանելու մասին իր բոլոր հաւատարմի հպատակներին միջեւ առանց դաւանութեան եւ ազգութեան խտրութեան։ Հասարակական հանգստութիւնը չարակամ մարդկանց ձեռքով խախտելու մասին մի քանի տեղերից երկիւղալի տեղեկութիւններ ստանալու պատճառով, նորին մեծութիւն փաղիշաւը բարեհաճեց հրամայել, որպէս զի վայրերը պալուրդ հսկողութիւն ունենան եւ աշխատեն կարգը եւ հանգստութիւնը պահպանել իրանց վարչութեան տակ գտնվող շրջաններում։ Իսկ չարամիտ ագիտատորների չնորհիւ ծագած որ եւ է խռովութեան դէպքում պէտք է ամեն ջանք գործ դնել անյապաղ վերջ տալու եւ առանձնացնելու այդ խռովութիւնը, ինչպէս առանձնապէս նուազ են ընկնում հրեաներ։ Պէտք է հետամուտ լինել, որ այդ խռովութիւնները կրօնական կամ ազգային բնաւորութիւն չընդունեն եւ որ մահմեդականները եւ քրիստոնեաները միմեանց վրա չը յարձակվեն չնչին պատճառների համար եւ զրանով խաղաղիք չը դառնան Թիւրքիայի թշնամիների ձեռքում, որոնք, դժբաղդաբար, քիչ չեն փաղիշաւի իսլամը դաւանող հպատակների միջեւ։ Արտատպելով այդ շրջաբերականը, երիտասարդ թիւրքերի լրագրը ասում է, որ մի քանի տարի առաջ, քրիստոնեաների կոտորածի ժամանակ Փոքր-Ասիայում, Կ. Պոլսի լրագրներից ներքին գործերի միմիկտր նոյն բովանդակութեամբ շրջաբերականը տպվեց։ Մահմեդականներից ոչ ոքի համար այն ժամանակ գաղութից էլէր, որ այդ շրջաբերական-հրամանը միայն ձեռի համար էր ուղարկվում, եւրօպական դիպլոմատային աչքին թոյլ փչելու նպատակով։ Իւրաքանչիւր վայրի մի եւ նոյն ժամանակ ամենախիստ հրաման էր ընդունում Իլդիզ-Բիսուկից անխնայ կոտորել, ուղարկութիւն չը դարձնելով հիւպատոսների բողոքի վրա։ Նոյն քանն է կրկնվում այժմ էլ Փոքր-Ասիայի խորքում։

ՄԵՏԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

18 սեպտեմբեր

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սեպտեմբերի 18-ին Պետերբուրգ վերադարձաւ զինուորական միմիկտր։

Սեպտեմբերի 18-ին իր գործունեութիւնն սկսեց հիւսիսային բանկը։ Ակցիաների պաշտօնական գնահատութիւնը կը սկսվի հոկտեմբերի 1-ից։

ՈՒՐԱԿՈՎ։ Ժամանց այստեղ իր Գիւմլի կալուածքից ներքին գործերի միմիկտր օգնական իշխան Պ. Դ. Սվետսոպոլի-Միսկի եւ արտակարգ գնացքով ծանապարհ ընկաւ Պետերբուրգ։

ՎԱՐՇԱՎԱ։ Համալսարանի խորհուրդը աւարտեց համալսարանի նիստուկայի փոփոխութեան հարցերի ջննդութիւնը, որ առաջարկել էր ժողովրդական լուսաւորութեան միմիկտր Կիեւ։ Գիւղատնտեսական բացվող դասընթացների դիմիկտր ընտրված է պոլիտեխնիկական ինստիտուտի դէկան Կոնովալով։ Դասախօսելու հիւպերված են 13 անձինք, մեծ մասամբ ինստիտուտի պրօֆէսորներ։

ՄՈՍԿՎԱ։ Դուժայի այսօրվայ նիստում քաղաքագլուխը հաղորդեց իրան ներկայացրած քաղաքաւոր Սօլօգովիեիովի կապից, որով ժամանկութեան երրորդ մասը—քսան միլիոն—նշանակվում է քաղաքին աղքատների համար էփած ընտանեկաններով տներ շինելու համար։ Այսօր ժողովրդական ժողկալութեան հոգաբարձութիւնը Գրուզինիում բացեց ժողովրդական տուն եւ թէյարան Սուխարեվսկայա հրապարակի վրա։ Սենեակները ընդարձակ եւ յարմար են ընթերցարանով, գրադարանով եւ լսարաններով։ Կերակուրներ էփան են։ Երկու շինութիւնների կապով 14,000 ռուբլի է։ Ծուտով թէյարաններ կը բացվեն խորովկալում եւ Տրուբնոյա հրապարակի վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր, երկուս հիւանդութիւնից յետոյ, մեռաւ Տեառար Կիրիլեզ, նախագահի որդին։ Տեառար Կիրիլեզը դեռ նորերս անձնատուր եղաւ անգլիացիներին Էլզովում, զուլուաների երկրում։ Վերջին տեղեկութիւնները երեւում է, որ Իտալա մարտկոցի մօտ եղած

կուրի մէջ բռնութիւնները պատճառով դաշտի վրա թողնել 305 մարդ:

ԼԵՂԻՍՄԻՏ: Անգլիացիները յաղթութիւնը զուգահեռ երկրում, ինչպէս երեւում է այժմ, աւելի մեծ էր, քան մինչեւ այժմ հաղորդուած էր. 200 բռնութիւն սպանվեցին, 300-ից աւելի վիրաւորված են եւ գերի են վերցված: Մայր ջամպան մեծ ճարտարութիւն յոյց տուեց: Տեղական ոստիկանները մի քանիսը սպանվեցին. անգլիական մի ոստիկանական օֆիցէր բռնութիւնի ձեռքն ընկաւ:

19 սեպտեմբերի

ԿԱԼԻՇ: Կալիշի գաւառի ինչ գիւղի բնակիչները մի քանիսին, որոնք անցել էին սահմանը, ձերբակալեց պրոտսական ժանդարմը: ձերբակալութեան ժամանակ գիւղացիները սատակ ձեռնեցին ժանդարմին եւ անգղայ դէրութեան մէջ նրան բերեցին մեր կողմը: Տեղական իշխանութիւնը ձեռնարկեց ժանդարմին յանձնեց պրոտսական իշխանութեանը: Մեղադրեալ Չայչինսկի եղբայրները, Կալիսովիչը եւ Բիլսկերը ձերբակալված են: Գնդութիւնը կատարուած է այստեղի դատական իշխանութիւնը:

ԿԱՆՏՈՆ: Խիշիկունքի մօտ գտնվող գերմանական միսիոնէրական կայարանը ապստամբները կործանեցին: Այդ կայարանի միսիոնէրները անվտանգ դրութեան մէջ են: Այստեղի գերմանական հիւպատոսը իսկույն եւ ինչ համոզեց չինական իշխանութեան ներկայացուցիչներին ձեռք առնել եռանդուն միջոցներ:

ՄԵԼԻՍՏ: Իտալա մարտիկների վրա կատարած յարձակման ժամանակ բռնութիւն կրած ընդհանուր կորուստը հաշուում են 500 հոգի: Զակատամարտը տեւեց 19 ժամ: Երկու օր շարունակ բռնութիւնը զբաղված էին իրանց սպանված հայրենակիցներին թաղելով: Զակատամարտին մասնակցում էին գնդերալ Լուի Բոտա, մայրներ Գրոբէլաք, Էմմէտ, Դանհաուզեր, Օպէրան, Շույն եւ Պոլտեր: Նրանցից վերջին երեքը ընկան կուռու: «Պրոսպէկտ» մարտիկների մօտ կռիւն տեւեց 10 ժամ եւ վերջացաւ նրանով, որ բռնութիւնը յետ մղվեցին:

ԲԵԼԳԻԱ: Սերբիական լրագրողները չեղոսգործական իշխանի քարտուղարից նամակ են ստացել, որի մէջ օտարազգի ժամուրի տարածած բոլոր լուրերը իշխանորդի Միլիոյի եւ իշխանադուտար Գանիայի նշանադրութեան մասին՝ մտադրած են յայտարարվում:

ՊԱՐԻՉ: Գնեւրալ Լէբելէն եւ գնեւրալ Լաւիվ դուրս եկան Պատուաւոր Լեգէոնի շքանշանի խորհրդի անդամութիւնից, որանով բոլորը յայտնվով այն բանի դէմ, որ գնեւրալ Դաւիդի տեղ Պատուաւոր Լեգէոնի կանցլէր նշանակվեց գնեւրալ Ֆորէնտէն:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍՏԱՆԿԱ ՄԵԼԻՍ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուրիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե ճ օ ռ, բ ա ճ Ի Կ ի ռ ա Կ ի օ ռ Ի ի յ:

Ա Ռ Ա Ռ Ո Ց Ն Ե Ր

Բ. Ս. Նախասարգիւն—12 ժ. վիրաւորութեան, վերականգն (սիֆիլիս) եւ միգրան. հիւանդ.

Կ. Մ. Զիլովանի—9—10 ժ. աչքի, ներքին եւ նեարդալիս:

Կ. Բ. Գոգիլիով—12—1 ժ. ակունքի, բթի եւ կուրի:

Զ. Բ. Բարանասեան—11—12 ժ. կանանց եւ երեխայից հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին եւ երեխայից:

Ե Ր Ե Կ Ո Ց Ն Ե Ր

Ն. Ն. Ռոստամբեկով—5—6 ժ. վիրաւորութեան եւ մորթու:

Ս. Ն. Եպիփանի—6—7 ժ. նեարդալիս (կիւկորալով), վերքի, եւ մորթու:

Դ. Ա. Թախանեան—7—7/2 ժ. ներքին եւ երեխայից:

Բ. Ս. Նախասարգիւն—7/2—8 ժ. վնաս 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) եւ օպերացիայի համար առանձին:

Օ. Ս. Ալաւիթիան—տանը, ծաղկահատ եւ բժշկական մարմնամարզ. գիւղի 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ:

Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՆՈՐՈԳՈՒՄ ԵՄ

Ա Մ Ե Ն Ա Է Ժ Ա Ն Գ Ն Ո Վ

ցեղը կերած, այրված եւ փռած գորգեր, կապերաներ, ձններ...

ԱԴ. Թիֆլիս, 7-ի յւ., Ախմետսկայա յւ., Դ. № 43, Սեպա Սարեւոյա. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Շաբաթ, սեպտեմբերի 22-ին

Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՅԻ

կը ներկայացնէ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՏՈՒՆ

Դրամա 4 արար. հեղ. Չուգերմանի, Թարգմ.

Ս. Թառայեանի

Մասնակցում են. տ.տ. Աւետեան, Սիւրանոյ, օր. Վարդուհի, տ. Փառաձեւ, պ.պ. Արեւեան, Ալիսանեան, Աղայեան, Աւետեան, Ջարիֆեան, Մէլիք-Յովսէփեան, Պետրոսեան, Ռչտունի, Ստեփանեան, Վրոյր եւ ուրիշներ:

Սկիզբը ճիշդ ժամը 8-ին

Տեղերի գները սովորական են

Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում: 1—1

ՆԵՐՍԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՂԱՄԱԶԵԱՆՏԻ ԳՐԳԵՐԸ

վաճառվում են իր եւ Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ հետեւեւի գներով

«Համառօտ քարտէսներ» . . . 1 ր. — 4. «Գրիստոնէական վարդապետութիւն» » 20 »

Շուտով լոյս կը տեսնէ Համառօտ եկեղեցական պատմութիւն: 1—4

ՄԻ ՀԱՅՈՒՆԻ

որ գիտէ հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուները, կամենում է անային վարժուհու պաշտօն ստանալ Թիֆլիսում կամ այլ քաղաքում, 7—9 տարեկան փոքրահասակ մէկ կամ երկու աղջիկներէ հետ պարագլու համար: Կը կամենար նաեւ կոմպանիօնկա լինել մի տիկնոջ:

Հասցէ՝ Театральная улица, Кавказское Товарищество Торговли Аптекарьскими Товарами. Спросить казначея Петрова. 3—3

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

Խմբարհար խնդրում եմ Թիֆլիսի (Մէլիքեանի) Կաթուղիէ օ. Աստուածածնայ եկեղեցու ծխականներից կիրակի, սեպտեմբերի 23-ին, առաւօտեան ժամը 11-ին, չնորհ բերել յիշեալ եկեղեցին, վերջինիս վերանորոգութեան մասին խորհրդակցելու:

Երէցփոխ Գրիգոր Բալանդուրեանց 2—3

ԲՐԻՒՍՍԵԼԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԱՆ ԱՒԱՐՏԱՄ

հռչակաւոր ջութակահար Տօմասնի աշակերտ

ԴԱԽԻԹ ԴԱԽԻԵԱՆ

Պատրաստում է ջութակի վրա արտասահմանեան կոնսերվատորիաների համար աշակերտներ:

Դիմել՝ Серебряный рядъ, д. Ходжиева, № 4, противъ православной семинаріи. 2—2

Թաւրիգի Միտիկալ Հայունեաց Բարեգործական ընկերութեան կար ու ձեւի արհեստանոցների համար

ՀԱՐԿԱԴՈՐ Է ՄԻ ՎԱՐԺՈՒՆԻ

Պայմանները համար դիմել Օլգինսկայա փ., № 19, տ. Ժորժին: 2—3

Ատամի եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների

ԲԺԻՇԿ Ն. ԿԱՃԿԱՃԵԱՆ

վերագործաւ եւ ընդունում է հիւանդների: Երեւանեան հրապարակ, տուն խորագրեան, «Ройновъ»-ի լուսանկարչական գործարանի տակ:

Эриванская площадь, домъ Харазова. (Ե. հ. չ. 4.) 2—10

ՄԱՆԿԱՐԱՐՈՒՄ ԵՄ ՄԱՍՆԱԴՐ

Սրբուհի Խոջամիրեանը բնակվում է Կադէկսկայա փողոցում, № 19 տան մէջ: 2—4

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Օր. Սարեանի

ԾԵՐՍԱԶԱՆԵԱՆՑ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒՆԴԱՆՈՒՆԻՆ

Առաւօտեան ժամը 9—2

Երեկոյեան ժամը 5—7

Վաճառք մեծ փողոց, տուն Մարտիրոսեանցի: (Կ. 4.) 7—60

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Վարչութիւնը

արանով յայտնում է նրա անդամներին, որ կանոնադրութեան 71-րդ յօդուածի զօրութեամբ տուած եռամսեայ արտօնութիւնը վճարները հատուցանելու համար լրանում է այս տարվայ հոկտեմբերի 1-ին եւ մինչեւ հոկտեմբերի 10-ը բոլոր ապառիկները չը վճարելու դէպքում պարտապանների կալուածքները, կանոնադրութեան 72-րդ յօդուածի զօրութեամբ, կը ծախվեն հրապարակական աճուրդով: 1—2

Կովկասեան Ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի թոյլտուութեամբ

Պ Օ Ղ Ո Ս Ք Ա Թ Ա Ն Ե Ա Ն Ց Ը

բաց է անում երկրորդ կարգի

ՄԱՍՆԱԴՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Միալոյովակի պրօսպէկտի վրա, գերմանական ուսումնարանին կից, գնդապետ Ակցիգի տանը, № 113:

Մինչեւ ամսիս 20-ը աշակերտները ընդունվում են ուսումնարանի կառավարչի բնակարանում, Աւստրիական փողոցի վրա, № 31:

Ուսման սկիզբը սեպտեմբերի 20-ին: 2—2

ԹԻՖԼԻՍԻ Հայունեաց Բարեգործական Ընկերութեան ԼՈՒԱՑՄԱՆՈՑՈՒՄ

Ը Ն Դ Ո Ւ Ն Ո Ւ Մ Ե Ն Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ո Ւ Հ Ի Ն Ե Ր

15 տարեկան հասակից

Հասցէ՝ Գանձակայա փողոց, № 25. (չ. Կ. 4.) 2—3

Շ Ղ Թ Ա Ց

Ղաւթարդեաներական Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն պ.պ. բաժնեւէրների, որ երրորդ 10%-ի վճարը, այսինքն իւրաքանչիւր փային 10 րուբլի, նշանակված է սոյն սեպտեմբերի 14-ից մինչեւ 22-ը ներկայված:

Բաժնեւէրները վճարման ժամանակ պէտք է ներկայացնեն բաժնետոմսերը: Նաեւ յիշեցնում է Ընկերութեան պայմանագրի 7-րդ յօդուածը:

Ընկերութեան գրասենեակը, Երեւանեան հրապարակ, տուն խորագրեանի (4, 11, 14, 17, 21). 4—5

ԳՈՒՏՏԵՆԻՐԻԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

Ա. Պոգոսեանի գումարով հրատարակված հետեւեւ մանկական գրքերը	
«Անդարդ Հանէսը», պատկերազարդ, փոխարութիւն Լ. Մէլիք Աղամեանի, գիրքն է. . . 40 Կ.	
«Կայէնն ու Մանէնը» . . . » . . . 40 »	
«Եօթն ագռաւ» . . . » . . . 40 »	
«Պատիկ ու ճափիկ» . . . » . . . 40 »	
«Ինչ է առում սենեակը», . . . » . . . 10 »	
«Եղծով դատաստան»: Թարգմանութիւն Ստ. Մալխասեանի . . . » . . . 5 »	
«Մաքսիմկա», ժողովրդական գրադարան, Թարգմ. Ար. Միխիլեանի . . . » . . . 15 »	
«Արդար ծերունի» . . . » . . . 10 »	
«Պառաւ ծիպը», մանկական գրադարան, Թարգ. տիկ. Եղ. Սարգսեանի . . . » . . . 3 »	
«Եսաի արկածները» . . . » . . . 10 »	
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну. 8—10	

Պատիւ. ունեւմ յայտնելու յարգելի հասարակութեան եւ վաճառականներին,

որ այս տարի ստացել ենք մեծ քանակութեամբ

Ա Մ Ե Ր Ի Կ Ա Կ Ա Ն Բ Է Ջ Ի Ն Է Կ Ա Լ Օ Շ Ն Ե Ր

ամեն տեսակ, տղամարդկանց, կանանց եւ երեխաների: Ուստի խնդրում եմ յարգելի առնողներին դիմել մեզ, ուր կը ստանան նոր ապրանք: Մեծ քանակութեամբ գնողներին կը լինի բաւական զիջում: Նոյնպէս ստացել ենք ՊՐՕՎՈՂՆԻԿ կոչված ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակի Պատուէրները կը կատարվեն անմիջապէս, նայած պայմաններին: Մեզ մօտ ծախվում են նոյնպէս ԿՕՇԻԿՆԵՐ փափկապն ուղիղ եւ փայլ տուող գունաւոր գլա գուրներ եւ կոչակարական ամեն տեսակ գործիքներ:

Մեր հասցէն. Тифлисъ, Армянскій базаръ, Братъя Яргуловы. Բաժանմունքը. Баку, Губернская ул., Т. Яргулянцъ. (չ. Կ.) 12—20

Լեոնային իմեմեր Ա. Ի. Միխայիլի եւ Ընկ. Քուրայիսի քաղաքային ջրանցքի ընկերութեան վարչութիւնը

արանով յայտնում է ի գիտութիւն բոլորի, որ առաջին սէրիայի ՓԱՅՆԸ Ծախվեցին եւ հրատարակեցին երկրորդ սէրիայի ՓԱՅՆԸ:

Ստորագրութիւն ընդունվում է Թիֆլիսում, Վարչութեան գրասենեակում, Երեւանեան հրապարակի վրա, խորագրի տանը, եւ Գուբայիսում, Ընկերութեան գրասենեակում: (չ. ուրբ. Կ.) 2—3

Ս ա Ր գ ի ս Վ. Ա Ր Ր ա ի ա Վ ե ա Ն

ԱԴ. Տոլոպի, ւղղ. Գանովսկայա և Տոլոպի, Դ. Մարկարով, № 27 և 31.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարագանքներ գտնելու համար

Հ Ա Շ Ո Ւ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ն

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդեաներական, գործարանական, առեւտրական, բանկային եւ չոգե-նաւային հաշուապահութիւն:

2) Առեւտրական թուաբանութիւն.

3) Առեւտրական թղթակցութիւն:

4) Պարտաւորակի օրէնքները:

5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ չրիֆտների եւ ուղղումն ամենամիտ ձեռքերի:

Հասցէ՝ ՍՈԼՈԼԱԿ, Գանձակայա եւ Սաղոմայա փողոցների անկիւն, տուն Մարգարեանի № 27 եւ 31:

Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյան: 20—25